ՆԱԽԱԳԻԾ-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2023թ. **N____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2023 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.694-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 04.05.2011թ. հ.2772831 վկայական) Բաբաջանյան փողոցի հ.143/3 հասցեի գույքը (318.78քմ մակերեսով հողամաս և 279.5քմ մակերեսով շինություն) անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2033 թվականի հուլիսի 1-ը ժամկետով տրամադրել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Երևանի օլիմպիական մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՊՈԱԿ-ին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևանի Բաբաջանյան փողոցի հ.143/3 հասցեի գույքը (318.78քմ մակերեսով հողամաս և 279.5քմ մակերեսով շինություն) անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Երևանի օլիմպիական մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՊՈԱԿ-ին:

Բաբաջանյան փողոցի հ.143/3 հասցեի գույքը (318.78քմ մակերեսով հողամաս և 279.5քմ մակերեսով շինություն) անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 04.05.2011թ. հ.2772831 վկայականի համաձայն հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը հ.01/31.3/2070-2022 գրությամբ միջնորդություն է ներկայացրել Երևանի քաղաքաետարան՝ խնդրելով աջակցել Ա.Բաբաջանյան 143/3 հասցեում գտնվող նախկին կաթսայատան տարածքը «Երևանի օլիմպիական մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՊՈԱԿ-ին տրամադրելու հարցում՝ նշելով, որ Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի ըմբշամարտի մասնագիտացված սպորտդպրոց-հիմնարկը ստեղծվել է 2003 թվականի փետրվարի 10-ին, այնուհետև վերակազմակերպման արդյունքում ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 1331-Ա որոշմամբ ստեղծվել է Երևանի օլիմպիական մանկապատանեկան համալիր մարզադպրոցը: Մարզադպրոցի 24 մարզիչ-մանկավարժների 41 խմբերում մարզվում են 460 սան, որոնցից շատերը հանդիսանում են Հայաստանի Հանրապետության տարբեր տարիքային խմբերի հավաքական թիմերի անդամներ, ինչպես նաև աշխարհի և Եվրոպայի առաջնությունների հաղթողներ և մրցանակակիրներ, սակայն մարզադպրոցը մշտապես ունի մարզադահլիճների խնդիր, ինչի հետևանքով խաթարվում է մարզադպրոցի ուսումնամարզական գործընթացը: Քննարկվող Ա.Բաբաջանյան 143/3 հասցեում գտնվող նախկին կաթսայատան տարածքը նախատեսվում է վերակառուցել նոր և ժամանակակից, բարեկարգ պայմաններով հագեցած մարզադպրոցի:

Ա.Բաբաջանյան 143/3 հասցեում գտնվող տարածքը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Երևանի օլիմպիական մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՊՈԱԿ-ին տրամադրելու նպատակահարմարության հարցը քննարկվել է Երևան քաղաքի ավագանու «Իմ քայլը», «Բարգավաճ Հայաստան» և «Լույս» խմբակցությունների կողմից: Խմբակցությունների կողմից առարկություններ չեն ներկայացվել և հարցի վերաբերյալ տրվել են դրական դիրքորոշումներ:

Ելնելով վերը շարադրվածից, ինչպես նաև ղեկավարվելով 2022 թվականի դեկտեմբերի 27-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու եվ օտարման 2023 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.694-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ